ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 03

19 դեկտեմբերի 2024 թվական

Տեղի ունեցավ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու Իրավական, սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 07 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Սոֆիա Միրզախանյանը, Լուսինե Գրիգորյանը, Արտակ Պետրոսյանը, Լյուդվիկ Եղիազարյանը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերով բաժնի պետի կողմից ներկայացված «ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» նախագիծը, որը ներկայացված է Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի արտահերթ նիստում :

Նիստում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սոցիալապես անապահով թվով 41 ընտանիքների սոցիալապես անապահովության հարցը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու Իրավական, սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է հետևյալ եզրակացությունը՝

1. Տալ համաձայնություն տրամադրելու դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ Սոֆիա Միրզախանյան

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ Լուսինե Գրիգորյան

ԱՆԴԱՄՆԵՐ՝
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ Արտակ Պետրոսյան

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
խմբակցության անդամ Լյուդվիկ Եղիազարյան